# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԱՄԱԼԻՐ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ընդունվել է 27.07.2001*

***Հոդված 1.*** Հաստատել աղետի գոտու վերականգնման համալիր ծրագիրը:

***Հոդված 2.*** Հաստատել «Հայաստանի Հանրապետության 2001 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի թիվ 1 հավելվածի թիվ 16 աղյուսակը, թիվ 5 եւ թիվ 7 հավելվածները նոր խմբագրությամբ (կցվում են):

***Հոդված 3.*** Թույլատրել Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ անհրաժեշտության դեպքում, մինչեւ աղետի գոտու վերականգնման համալիր ծրագրի ավարտը, աղետի գոտու վերականգնման համապատասխան տարեկան ծրագրի (այսուհետ՝ տարեկան ծրագիր) շրջանակներում համապատասխան տարեկան բյուջեով նախատեսվող ծախսային ծրագրերի գծով սահմանվող բյուջետային հատկացումների գումարների միջեւ կատարելու վերաբաշխումներ՝ տարեկան ծրագրի ընդհանուր ծավալի մինչեւ 15 տոկոսի չափով:

***Հոդված 4.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ

**15 օգոստոսի 2001թ.**
**ՀՕ-203**

## ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԱՄԱԼԻՐ ԾՐԱԳԻՐ


- 1.Ներածություն
- 2.Ներկա վիճակի վերլուծություն
- 3.Համալիր ծրագրի նպատակը եւ հիմնական խնդիրները
- 4.Համալիր ծրագրի իրականացման սկզբունքները
- 5.Աղետի գոտու առանձին ոլորտների վերականգնում
- 6.Համալիր ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները
- 7.Համալիր ծրագրի իրականացման կազմակերպչական սխեման
- 8.Համալիր ծրագրի իրականացումից սպասվող արդյունքները


### 1.Ներածություն

Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագիրը (այսուհետ՝ համալիր ծրագիր) մշակված է «Աղետի գոտու վերականգնման մասին» ՀՀ օրենքի դրույթների համաձայն:

Համալիր ծրագիրը աղետի գոտու վերականգնմանն ուղղված պետական քաղաքականության ռազմավարության հիմքն է:

Համալիր ծրագրով նախատեսվում է աղետի գոտում, նախկինում ընդունված որոշումների համաձայն, վերականգնողական աշխատանքների շարունակում՝ ճշտելով դրանց ներկայումս անհրաժեշտ ծավալները, կիրառելով իրականացման նոր մոտեցումներ, որոնք նպատակաուղղված են երկրաշարժի հետեւանքով անօթեւան մնացած քաղաքացիների բնակարանային պայմանների բարելավմանը, ինչպես նաեւ բնակավայրերում բնակության համար բարենպաստ պայմանների ստեղծմանը:

Համալիր ծրագիրը հիմք է հանդիսանում տարեկան ծրագրերի մշակման համար:

Համալիր ծրագիրը մշակված է՝ ելնելով հանրապետությունում ստեղծված սոցիալ- տնտեսական իրավիճակից:

## 2.Ներկա վիճակի վերլուծություն

1988թ. դեկտեմբերի 7-ի Սպիտակի երկրաշարժն ընդգրկեց հանրապետության տարածքի շուրջ 40 տոկոսը՝ մոտ 1 մլն բնակչությամբ:

Երկրաշարժի հետեւանքով լրիվ կամ մասամբ ավերվեցին ավելի քան 230 արդյունաբերական օբյեկտներ (82 հազ. աշխատատեղով), քանդվեց կամ տարբեր աստիճանի փասվածություն (I-IV աստիճան) ստացավ 8,9 մլն քառ.մ ընդհանուր մակերեսով բնակարանային ֆոնդը, այդ թվում՝ 4,1 մլն քառ.մ պետական եւ 4,8 մլն քառ.մ անհատական, 150,2 հազ. աշակերտական տեղով հանրակրթական դպրոցներ, առողջապահական 416 օբյեկտներ, ինչպես նաեւ առեւտրի, հանրային, սննդի, կապի, տրանսպորտի, կոմունալ տնտեսության, արդյունաբերության եւ այլ նշանակության մեծաքանակ օբյեկտներ:

Երկրաշարժի հետեւանքների վերացման նպատակով ընդունվել են մի շարք որոշումներ:

1989թ. նախկին Խորհրդային Միության իշխանությունների կողմից ընդունված որոշումների համաձայն նախատեսվում էր միութենական հանրապետությունների, նախարարությունների, գերատեսչությունների ուժերով եւ միջոցներով 1989-1990թթ. վերականգնել աղետի գոտին: Չնայած կատարված մեծ ծավալի աշխատանքներին՝ վերականգնողական աշխատանքները տարբեր պատճառներով նախատեսված ծավալներով չիրականացվեցին, որի հետեւանքով սառեցվեցին տարբեր շինարարական պատրաստականության աստիճան ունեցող շուրջ 4700 անավարտ օբյեկտներ: Այդ օբյեկտներից մոտ 3800-ը կամ 80 տոկոսը կազմում են անավարտ շինարարության բնակելի տներ, որոնցից շուրջ 2900-ը՝ մենատներ գյուղական բնակավայրերում:

1991թ. սկսած աղետի գոտու վերականգնման աշխատանքների ամբողջ ծանրությունն ընկավ Հայաստանի Հանրապետության վրա:

Ստեղծված իրավիճակից ելնելով՝ ՀՀ կառավարությունը 1994թ. հոկտեմբերի 7-ի թիվ 17 որոշումով հաստատեց աղետի գոտու վերականգնման նոր ծրագիր: Այդ ծրագրերով ճշտվեցին երկրաշարժի հետեւանքով տուժած բնակավայրերի առանձին ոլորտների վերականգնման ենթակա ծավալները, պահպանելով նախորդ ծրագրի հիմնական մոտեցումները, եւ աղետի գոտու վերականգնման ժամկետը երկարաձգվեց մինչեւ 2000թ.:

Երկրաշարժից 10 տարի անց աղետի գոտու վերականգնման գործընթացի վերլուծության արդյունքները եւ հանրապետությունում իրականացվող բարեփոխումները կանխորոշեցին աղետի գոտու բնակավայրերի վերականգնման քաղաքականության ճշգրտման անհրաժեշտությունը: Արդյունքում, ՀՀ կառավարության 1998թ. նոյեմբերի 11-ի թիվ 701 որոշումով հավանության արժանացավ աղետի գոտու վերականգնման առաջնահերթ ծրագիրը, որով պետական ուղղակի միջամտությամբ եւ ռեսուրսներով առաջնային դարձավ երկրաշարժից տուժած բնակավայրերի բնակարանային եւ սոցիալական ոլորտի խնդիրների լուծումը:

Այդ ծրագրով սահմանվեցին անօթեւան մնացած ընտանիքների նկատմամբ բնակարաններով ապահովման եւ սոցիալական ոլորտի օբյեկտների վերականգնման՝ պետության ստանձնած պարտավորությունների իրականացման ուղիները: Բնակարանային ապահովման գործընթացում, բնակարանային շինարարությունից բացի, ըստ էության առաջին անգամ ներդրվեց բնակարանների գնման վկայագրերի տրամադրման գաղափարը, որը բնակչությանը հնարավորություն ընձեռեց ազատորեն ընտրել իր բնակության վայրը եւ բնակարանի որակը:

1989-2000թթ.. ժամանակահատվածում ֆինանսավորման բոլոր աղբյուրների հաշվին իրացված ներդրումների դիմաց աղետի գոտու բնակավայրերում գործարկվել են 3.5 մլն քառ. մ ընդհանուր մակերեսով բնակելի տներ:

Կառուցվել եւ ամրացվել են շուրջ 68 հազ. աշակերտական տեղով դպրոցներ, 2,8 հազ. մահճակալով հիվանդանոցներ, մեկ հերթափոխում 4,3 հազ. հաճախումով պոլիկլինիկաներ, ինչպես նաեւ նախադպրոցական օբյեկտներ եւ այլ հասարակական օբյեկտներ:

Մոտ 1,3 հազ. կմ երկարություն ունեցող նոր կառուցված կամ վերանորոգված ջրատարերից բացի, կատարվել են նաեւ կառուցված բնակելի շենքերի ջրագծերի ջրատարերին միացման աշխատանքներ: Բացի այդ, Գյումրիի Մուշ-2

թաղամասի կառուցապատված ՔՇՀ-ների ջերմամատակարարումն ապահովելու նպատակով կառուցվել եւ շահագործման է հանձնվել ինքնավար ջեռուցման կաթսայատուն:

Համաշխարհային բանկի կողմից տրամադրված վարկի հաշվին իրականացված ծրագրի շրջանակներում ավարտվել են 9 արդյունաբերական օբյեկտների մասնաշենքեր եւ մեկ փորձահրապարակ՝ շենքերի բլոկների արտադրության համար:

Սակայն, արդյունաբերական ոլորտի տարբեր ճյուղերի տնտեսական կապերի խզման, շուկայի արդի պահանջներին չհամապատասխանելու պատճառներով մի շարք ձեռնարկություններ, այդ թվում՝ վերը նշված 9-ը, չեն գործում կամ գործում են թերի հզորությամբ:

Նրանց հիմական ֆոնդերը բնութագրվում են բարձր մաշվածության աստիճանով եւ չեն համապատասխանում ժամանակակից ստանդարտներին, որն անհնարին է դարձնում մրցունակ ապրանքների արտադրության կազմակերպումը: Արդյունքում, կրճատվել են աշխատատեղերը, եւ նվազել է բնակչության զբաղվածության աստիճանը: Քաղաքների արդյունաբերության ոլորտի օբյեկտներից թերի հզորությամբ գործում են սննդաարդյունաբերական օբյեկտները, շինարարական համալիրը: Վերը նշված գործոնները նպաստել են այդ բնակավայրերից ազգաբնակչության հոսքին:

1989-2000թթ. վերականգնողական աշխատանքներն իրականացվել են ինչպես պետական միջոցների, այնպես էլ արտաբյուջետային միջոցների հաշվին:

Այդ ժամանակահատվածում աղետի գոտու վերականգնմանն ուղղված կապիտալ ներդրումների իրացման եւ գործարկված հիմական միջոցների, հզորությունների մասին տվյալները բերված են հավելվածում:

Չնայած աղետի գոտու վերականգնման ուղղությամբ իրականացվող շարունակական ծավալուն աշխատանքներին, աղետի գոտու բնակավայրերը՝ հատկապես Գյումրի, Սպիտակ, ինչպես նաեւ Վանաձոր եւ Ստեփանավան քաղաքները, դեռեւս պահպանում են աղետյալ բնակավայրերի տեսք: Դա պայմանավորված է բնակավայրերի հին թաղամասերում տարերայնորեն տեղակայված մեծաքանակ ժամանակավոր կացարանների, տնակների եւ մինչ այժմ քանդման ենթակա եւ վթարային տների ու շինությունների առկայությամբ: Որպես ժամանակավոր կացարաններ են օգտագործվում նաեւ որոշ քանդված դպրոցների եւ արդյունաբերական օբյեկտների շենքերը:

Հարկ է նշել, որ երկրաշարժի հետեւանքների վերացման աշխատանքները նախկինում հիմականում իրականացվել են քաղաքաշինական նոր թաղամասերի տարածքներում՝ սակավ ուշադրություն դարձնելով քաղաքներում գոյություն ունեցող թաղամասերի վերականգնման աշխատանքների իրականացմանը:

Արդյունքում, անավարտ բազմաբնակարան շենքերը եւ սպասարկման ենթակառույցները գտնվում են աղետի գոտու քաղաքների նոր կառուցապատման թաղամասերի մեծ, անկառավարելի (քաղաքաշինական առումով) տարածքներում, եւ դրանց մեծ մասի ավարտը չի համապատասխանում քաղաքների զարգացման ներկա չափանիշներին:

Երկրաշարժից հետո անցած տարիների ընթացքում աղետի գոտու բնակավայրերի ժողովրդագրական փոփոխությունները եւ վերականգնողական աշխատանքների իրականացման ընթացքը եւս նոր հարցադրումներ են առաջադրել փասված քաղաքաշինական օբյեկտների նախկին ծավալներով կառուցման նպատակահարմարության առումով:

## 3. Համալիր ծրագրի նպատակը եւ հիմական խնդիրները

Ծրագրի նպատակը աղետի գոտու վերականգնման պետական քաղաքականության հիմական սկզբունքների ձեւավորումն է՝ ուղղված երկրաշարժի հետեւանքով տուժած բնակավայրերում բնակության համար բարենպաստ պայմանների ստեղծմանը:

Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ, առաջնային հիմական խնդիրներն են՝

- երկրաշարժի հետեւանքով անօթեւան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծումը.

- համալիր սպասարկման ենթակառուցվածքների (սոցիալական, կոմունալ եւ հասարակական նշանակության օբյեկտներ) վերականգնումը՝ ելնելով բնակավայրերի ճշգրտված կառուցապատման հատակագծային փաստաթղթերից.

- աղետի գոտու քաղաքների նոր հատակագծային փաստաթղթերի նախապատրաստումը՝ ելնելով քաղաքների համապետական նշանակությունից, սահմանելով դրանց իրագործման ժամանակացույցը.

- բնակարանային շուկայի զարգացումը խթանող սեփականաշնորհման իրականացումը.

- բնակչության զբաղվածության աստիճանի բարձրացման պայմանների ստեղծումը.

- արտադրական ներուժի վերականգնումը.

- օրենսդրական դաշտի ապահովումը:

## 4. Համալիր ծրագրի իրականացման սկզբունքները

Հիմական խնդիրների լուծման նպատակով համալիր ծրագրով նախատեսվում է տնակային տնտեսություններից, ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով, տարածքների հիմավորված ու հաջորդական մաքրման եւ զուգահեռ այդ տարածքներում առկա խնդիրների լուծման սկզբունքի կիրառումը՝ ելնելով ժողովրդագրական փոփոխություններից:

Այդ մոտեցումը հնարավորություն կտա `

- առանձին տարածքների համապարփակ համալիր վերականգնում.

- առանձին տարածքների վերականգնման ավարտից հետո անհրաժեշտության դեպքում անդրադառնալ տնակային տնտեսություններից ազատված տարածքների նոր կառուցապատման խնդիրներին՝ համաձայն ճշտված քաղաքաշինական փաստաթղթերի:

Ծրագրով նախատեսվում է հիմական խնդիրների լուծման պետական աջակցության ապահովումը նվազագույն ստանդարտների համակարգի ներդրման միջոցով՝ համաձայն տնտեսության տարբեր ոլորտներում տարվող քաղաքականության ուղիների:

## 5. Աղետի գոտու առանձին ոլորտների վերականգնում

### *5.1 Բնակարանային ոլորտ*

Անօթեւան մնացած քաղաքացիների բնակարանային խնդիրների լուծման համար համալիր ծրագրով նախատեսվում է պետական պարտավորությունների ձեւավորման եւ աջակցության տրամադրման հետեւյալ սկզբունքները՝

- ապահովել բնակարաններով երկրաշարժի հետեւանքով քանդված կամ քանդման ենթակա բազմաբնակարան տների սահմանված կարգով հերթագրված քաղաքացիներին:

Այս ուղղությամբ բնակարաններով ապահովումը նախատեսվում է իրականացնել՝

-համայնքային սեփականություն հանդիսացող ազատ բնակարանների տրամադրմամբ,

-բնակարանների գնման վկայագրերի տրամադրմամբ՝ շուկայից պատրաստի բնակարան ձեռք բերելու համար,

-անավարտ շինարարության բազմաբնակարան բնակելի տների ավարտմամբ՝ ավարտելով այն բնակելի տների շինարարությունը, որոնց ավարտման համար մեկ քառ. մետր ընդհանուր մակերեսին ընկնող անհրաժեշտ ներդրումները չեն գերազանցում տվյալ բնակավայրում բազմաբնակարան տների բնակարանների մեկ քառ.մ ընդհանուր մակերեսի՝ ձեւավորված շուկայական միջինացված արժեքի չափը, ինչպես նաեւ քաղաքաշինական նկատառումներից ելնելով՝ մեկ շինարարական համալիր կազմող բնակելի տների շինարարությունը:

Անավարտ շինարարության այն բազմաբնակարան տները, որոնց ավարտը տնտեսապես նպատակահարմար չէ, նախատեսվում է մասնավորեցնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով.

-նոր շինարարության իրականացմամբ:

Նոր կամ անավարտ բնակելի տների շինարարություն իրականացնելու դեպքում քաղաքացիները, իրենց համաձայնությամբ, կարող են մասնակցել սեփական մասնաբաժնով եւ պետական աջակցությամբ այդ աշխատանքների իրականացմանը՝ իրենց կողմից ստեղծված համատիրությունների կամ կոոպերատիվների միջոցով.

- աջակցել բնակարանային պայմանների բարելավման հարցում՝

-չշահագործման հետեւանքով բնակության համար ոչ պիտանի դարձած, փլասված
բազմաբնակարան տների բնակիչներին բնակելի տների վերականգնման աշխատանքների իրականացման միջոցով,

-քաղաքային բնակավայրերում տնակային տնտեսություններում բնակվող այն քաղաքացիներին՝

ա)որոնց բնակարանները (բազմաբնակարան տներում), չշահագործման հետեւանքով դարձել են բնակության համար ոչ պիտանի՝ բնակարանների վերանորոգման համար դրամաշնորհների տրամադրման միջոցով.

բ) ոչ աղետի հետեւանքով անօթեւան մնացած, մշտական բնակության վայր չունեցող, մինչեւ սույն օրենքի ընդունումը տնակներում բնակվող ընտանիքների, իրենց գրավոր համաձայնությամբ, բնակարանային խնդիրները ժամանակավորապես լուծել՝ ցուցաբերելով տարբերակված մոտեցում (ժամանակավոր կացարանների տրամադրում, տնակների տեղափոխում, երկու տարով բնակարանների վարձակալման համար օժանդակության ցուցաբերում), ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով: Այդ բնակիչների բնակարանային պայմանների բարելավման հարցը համալիր ծրագրի իրականացման արդյունքներով կդիտարկվի 2003 թվականին՝ պետական բյուջեի քննարկման ժամանակ:

գ) որոնք հերթագրված են, եւ նրանց ընտանիքների մի մասը մինչեւ ՀՀ կառավարության 1998թ. նոյեմբերի 11-ի՝ «Աղետի գոտու վերականգնման առաջնահերթ ծրագրի մասին» թիվ 701 որոշումն ստացել են բնակտարածություն՝ նախկինում զբաղեցրած բնակարանի չափից ոչ պակաս՝ տվյալ տարածաշրջանում ձեւավորված մեկսենյականոց բնակարանի շուկայական նվազագույն արժեքին համապատասխան, ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով ֆինանսական աջակցություն տրամադրելու միջոցով:

Արդյունքում, պետական պարտավորությունները ձեւավորվում են բնակարանային խնդիրների լուծման կարիք ունեցող 14920 ընտանիքների նկատմամբ, այդ թվում՝

-սահմանված կարգով հերթագրված 10979 ընտանիքներ, որոնցից 946 ընտանիքի մի մասը ստացել է բնակարան՝ նախկինում զբաղեցրած բնակարանի չափից ոչ պակաս.

- վերականգնման (ամրացման) ենթակա չշահագործվող բազմաբնակարան տների 2547 ընտանիքներ.

- չամրացվող բազմաբնակարան տներում չշահագործման հետեւանքով բնակության համար ոչ պիտանի դարձած բնակարանների 174 ընտանիքներ.

- ոչ աղետի հետեւանքով անօթեւան մնացած, մշտական բնակության վայր չունեցող, վերջին մեկ տարում տնակներում բնակվող սոցիալապես անապահով 1220 ընտանիքներ:

- Տվյալներն ըստ մարզերի բերված են աղյուսակ 1-ում:

Շահագործվող, վերանորոգման, վերականգնման կարիք ունեցող բազմաբնակարան տների բնակիչներին ծրագրի շրջանակներում նախատեսվում է պետական աջակցության տրամադրում՝ նրանց կողմից սահմանված կարգով համատիրությունների ստեղծման եւ վերանորոգման, վերականգնման աշխատանքներին պարտադիր մասնակցության պայմանով:

Ինչ վերաբերում է բնակության համար ոչ պիտանի դարձած անհատական բնակելի տների բնակիչներին, ապա նրանց բնակարանային պայմանների բարելավման համար նախատեսվում է տրամադրել ֆինանսական աջակցություն՝ դոնոր կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի շրջանակներում:

Մասնավորապես, ԱՄՆ կառավարության կողմից իրականացվող ծրագրի շրջանակներում նախատեսվում է դրամաշնորհների տրամադրում շուրջ 800 անհատական բնակարանային ֆոնդի քաղաքացիներին: Առաջիկա երկու տարիներում նույնպես նախատեսվում է ընդլայնել աջակցության հնարավորություններն այդ ուղղությամբ, որի